ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՆՔ

2018 թ. ձմեռային եւ 2019 թ. ամառային զորակոչերի ընթացքում իրավախորհրդատվության նպատակով ՀՔԱ Վանաձորի գրասենյակ դիմած զորակոչիկների իրավունքների վիճակի և խնդիրների վերաբերյալ

2018 թ.-ի ձմեռային եւ **2019 թ.-ի ամառային** զորակոչերի ընթացքում ՀՔԱ Վանաձորի գրասենյակ է դիմել **94** զորակոչիկ՝ համապատասխանաբար **32** և **62** հոգի:

2018 թ.-ի ձմեռային զորակոչի համեմատ 2019 թ. ամառային զորակոչին Կազմակերպություն դիմած զորակոչիկների թիվն աճել է գրեթե կրկնակի անգամ:

Ստորև՝ աղյուսակ 1-ում, ներկայացվում են 2018 թ.-ի ձմեռային և 2019 թ.-ի ամառային զորակոչերի ընթացքում Կազմակերպություն դիմած զորակոչիկների խնդիրները:

Աղյուսակ 1. Կազմակերպություն դիմած զորակոչիկների խնդիրներն ըստ զորակոչերի

Խնդիր	2018 թ. ձմեռային զորակոչ	2019 թ. ամառային զորակոչ	Ընդամենը
Առողջական խնդիրներ/ ոչ պատշաճ բժշկական օգնություն ստանալու, առողջական վիճակի գնության արդյունքների հետ անհամաձայնություն	18	42	**60**
Քաղաքացիության, երկքաղաքացիության հետ կապված հարցերի վերաբերյալ խորհրդատվություն	6	3	**9**
Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից օրենքով սահմանված դեպքերում տարկետման հիմքերի վերաբերյալ խորհրդատվություն	2	8	**10**
«Սահմանված կարգի խախտմամբ զինծառայություն չանցած քաղաքացիների մասին» օրենքի դրույթների վերաբերյալ խորհրդատվություն	3	4	**7**
Հաշվառման վայրի փոփոխության դեպքում զինվորական կոմիսարիատի փոփոխության, զինկոմիսարիատից առողջական վիճակի փաստաթղթերի ստացման կարգի, միաժամանակ զորակոչվող եղբայրների միևնույն զորամասում ծառայելու հնարավորության, զինծառայության ընթացքում կիրառվող սահմանափակումների, հատուկ զորամասերում ծառայության հնարավորության, ԿԲՀ որոշման բողոքարկման ընթացակարգերի վերաբերյալ խորհրդատվություն,	3	5	**8**
Ընդամենը	**32**	**62**	**94**

Երկու զորակոչերին էլ զորակոչիկների գերակշիռ մասը (56%) դիմել է առողջական խնդիրների հետ կապված հարցերով:

Մոտ 9 %-ի խնդիրը կապված է եղել քաղաքացիության հետ, մասնավորապես՝ միաժամանակ այլ երկրի քաղաքացի լինելու եւ զինվորական ծառայություն անցնելու կամ զինվորական ծառայությունից ազատվելու հիմքերի հետ:

Մոտ 10 %-ի խնդիրը առնչվել է օրենքով սահմանված դեպքերում տարկետման հիմքերին:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակ դիմած զորակոչիկների 7 %-ը խորհրդատվություն են ստացել «Սահմանված կարգի խախտմամբ զինծառայություն չանցած քաղաքացիների մասին» օրենքի դրույթների վերաբերյալ:

Մյուս զորակոչիկների խնդիրները կապված են եղել տարբեր ընթացակարգերի հետ:

Հիշեցնենք, որ նախորդ՝ **2017 թ.-ի ձմեռային** և **2018 թ.-ի ամառային** զորակոչերին Կազմակերպություն դիմած զորակոչիկների թիվը ևս կազմել է **94**, համապատասխանաբար՝ **40** և **54** հոգի[1]:

2018 թ. ձմեռային եւ 2019 թ. ամառային զորակոչերի ընթացքում արձանագրված խնդիները

Ստորև ներկայացվում են 2018 թ. ձմեռային եւ 2019 թ. ամառային զորակոչերի ընթացքում Կազմակերպության կողմից արձանագրված հիմնական խնդիրները:

1. Զորակոչիկների առողջական վիճակի հետազոտությունները շարունակվում են իրականացվել թերի, հիվանդության հաստատման կամ ժխտման համար չի իրականացվում լրացուցիչ կամ անհրաժեշտ հետազոտություն, որը կարեւոր նշանակություն կարող է ունենալ զինվորական ծառայության պիտանիության հարցի որոշման համար:
2. Որոշ դեպքերում շարունակվում են զորակոչիկի առողջական վիճակի զննության վերբերյալ անհրաժեշտ բժշկական փաստաթղթերի, ինչպես նաև ԿԲՀ որոշումների օրինակների տրամադրման մերժման դեպքերը զինկոմիսարիատներում: Նման դեպքերում մերժման համար նաեւ պատճառաբանություն է նշվում այն

[1] https://drive.google.com/file/d/1FG5qFAGct_rIlrF-PN-p9hsMTiXAw8w5/view

հանգամանքը, որ բուժհաստատություններից դեռեւս փաստաթղթերը չեն ստացվել, չնայած բուժզնություններից օրվանից անցել է առավել քան մեկ ամիս:

3. Բժշկական հաստատությունները հիմնականում հրաժարվում են տրամադրել զորակոչիկների առողջական վիճակի հետազոտման արդյունքների վերաբերյալ փաստաթղթերի պատճենները, խախտելով 2018 թ. ՀՀ Կառավարության 405 որոշմամբ սահմանված պարտավորությունը:

4. Մի քանի առողջական խնդիր ունեցող զորակոչիկներին տրամադրվում է տարկետում՝ հիմնվելով առողջական միայն մեկ խնդրի վրա, չնայած, որ զորակոչիկն ունի այլ առողջական խնդիրներ: Այսպիսով՝ չի իրականացվում զորակոչիկի համալիր բուժզննություն:

5. Կենտրոնական բժշկական հանձնաժողովի եզրակացությունը երբեմն խիստ տարբերվում է զորակոչիկների առողջական վիճակի վերաբերյալ բուժհաստատությունների կողմից իրականացված հետազոտությունների ակտերով հաստատված ախտորոշումներից:

6. Զինկոմիսարիատի աշխատակիցները շարունակում են ծանուցագիրը տրամադրել բացի զորակոչիկներից նաեւ այլ անձանց՝ ընտանիքի անդամներ, ծանոթներ, ինչպես նաեւ ծանուցումն իրականացնում են հեռախոսազանգով:

7. Մարզերից ուղեգրված զորակոչիկները մայրաքաղաքում բուժզննության ուղեգրվելու դեպքում ստիպված են լինում մի քանի անգամ ներկայանալ հետազոտման այն պատճառաբանությամբ, որ կամ մասնագետները տեղում չեն, կամ աշխատանքային օրն է ավարտվել, կամ անհրաժեշտ սարքավորումն է բացակայում:

Առավել ամբողջական՝ այդ թվում նաև օրենսդրական խնդիրների վերաբերյալ տվյալներ կներկայացվեն ավելի ուշ:

Վանաձոր, 2019

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ hcav@hcav.am